

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵՒԱՅԼՔ**

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐԸ ԵՒ ՔՆԵՍԵԹԻ
ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ
ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՅՈՂ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Միայն 2025 թուականի Ապրիլին Երուսաղէմի Հին քաղաքին մէջ արձանագրուած է քրիստոնեաներու նկատմամբ ոտնձգութիւններու 20 միջադէպ, որու մասին 31 Մարտ, 2025-ին, իրազեկուած է Իսրայէլի Քնեսեթի Ներգաղթի եւ Սփիւռքի հարցերով յանձնաժողովը:

Յանձնաժողովը, որ կը գլխաւորէր պատգամաւոր Գիլադ Քարիվը, մէկտեղուած էր քննարկելու քրիստոնեայ հոգեւորականներու եւ ուխտաւորներու նկատմամբ ոտնձգութիւններու հարցը: Ներկայ էին Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Գերապատիւ Տ. Ատուֆօ Տիտօ Լլանայ, Ֆրանչիսկեան Քիւսթոտ՝ Հոգեշնորհ Տ. Ֆրանչեսկո Փաթոն, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան եւ եկեղեցիներու այլ ներկայացուցիչներ:

Քրիստոնեաներու նկատմամբ տեղի ունեցող ոտնձգութիւններու վերաբերեալ այսպիսի քննարկում առաջին անգամ է որ տեղի կ'ունենար: Նիստին սկիզբը Տիար Քարիվ ըսաւ. «Մենք ականատես կ'ըլլանք անհանդուրժելի երեւոյթի մը օրինապաշտ երկրի եւ յատկապէս հրէական եւ ժողովրդավարական պետութեան մէջ՝ քրիստոնէական հաստատութիւններու, հոգեւորականութեան եւ ուխտաւորական խումբերու նկատմամբ ոտնձգութիւններ»: Ան աւելցուց, որ 2024 թուականին տեղի ունեցած են աւելի քան 100 նման միջադէպեր: «Քրիստոնէական հաստատութիւններու եւ հոգեւորականութեան նկատմամբ ոտնձգութիւններու երեւոյթը, ներառեալ բանաւոր եւ ֆիզիքական բռնութիւնը եւ վանդալիզմը, ամօթաբեր է Իսրայէլի պետութեան՝ որպէս ժողովրդավարական երկիր, որը յանձնառու է կրօնի եւ պաշտամունքի ազատութեան եւ բոլոր հաւատքներու համար Սուրբ Վայրերու պաշտպանութեան» — ընդգծեց ան եւ շարունակեց. «Ատիկա նաեւ ամօթ է մեզի՝ որպէս հրեաներու պետութեան, որ կը կրէ հալածանքներու, խտրականութեան եւ նուաստացումի պատմական յիշողութիւնը»:

Համաձայն շարք մը Պաղեստինեան լրատուամիջոցներու եւ քրիստոնէական լրատուական կայքերու, Իսրայէլական ուժերը Զատիկի նախօրէին կանխած են Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Գերապատիւ Տ. Ատուֆօ Տիտօ Լլանայի եւ այլ եպիսկոպոսներու մուտքը Սուրբ Յարութեան Տաճար: «Դուք տեսաք սոցիալական կայքերու մէջ, թէ ինչ պատահեցաւ ինծի» — ըսաւ Լլանայ յանձնաժողովին: «Եւ վիրաւորուած եմ, ոչ թէ որպէս Պապական Նուիրակ, այլ որպէս հաւատացեալ: Մենք կ'աղօթենք, որ այստեղ միջոցներ ձեռնարկուին ոտնձգութիւններու դէմ: Երբ այդպիսի բաներ տեղի կ'ունենան, աշխարհը այսպէս կը տեսնէ Իսրայէլը: Պաշտամունքի վայրերու մէջ զէնքին տեղ չկայ»:

Քրիստոնէութեան հետազօտող եւ ակտիւիստ Յիցկա Հարանի թուարկեց քրիս-

տոնեաներու նկատմամբ ոտնձգութիւններու քանի մը տեսակներ, այդ թւում՝ «թքելը, վիրաւորանքները, կրօնական թափօրներու մէջ ներխուժումը, վանդալիզմը, ֆիզիքական յարձակումները, պղպեղի խեղդող կազի սրսկումները»։ Մարդիկ կը վախնան այստեղ գալ։ Այս երեւոյթները տարածուած են եւ կարելի չէ անտեսել։

Միջ-կրօնական կոմիտէի եւ գլխաւոր Ռաբբինատներու խորհուրդի անդամ Ռաբբի Էլիեզէր Սիմխա Վայս նոյնպէս դատապարտեց ոտնձգութիւնները՝ ըսելով. «Ծայրայեղական խումբերը, որոնք կը թքեն, կը նուաստացնեն, չեն ներկայացնէր Յուդայականութիւնը։ Ասիկա Տորայի ուղին չէ»։

Իսրայէլի ոստիկանութեան Հին քաղաքի հետաքննութեան եւ հետախուզութեան պետ՝ Տիար Ասաֆ Հարելն ալ ըսաւ, որ իր բաժանմունքը մեծ նշանակութիւն կու տայ քրիստոնէական դաւանանքներու հետ կապի պահպանման, լուրջ կը վերաբերի նման միջադէպերուն եւ լուծում կու տայ ինչպէս բացայայտ, այնպէս ալ գաղտնի գործողութիւններով։

Նիստին ներկայ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան կոչ ըրաւ Իսրայէլ պետութեան օրէնք ընդունիլ՝ քրիստոնէայ փոքրամասնութիւններու վրայ յարձակողներու նկատմամբ պատիժներ սահմանելու։ «Հայ հոգեւորականի համար քիչ բան չէ Իսրայէլի Քնեսեթի մէջ լսելի ըլլալ։ Քնեսեթի մէջ Հայուն ձայն տալը հզօր ուղերձ մըն է աշխարհին, թէ Իսրայէլը ձայն կու տայ փոքրամասնութիւններուն եւ կը մերժէ հալածանքները։ Այն ցոյց կու տայ, թէ մեր ձայնը կարելոր է, թէ հայերը անտեսուած չեն» — ընդգծեց Հայր Սուրբը (Հ. Աղանի ամբողջական խօսքը տե՛ս գրութեանս վերջաւորութեան)։

Յանձնաժողովը անդրադարձաւ նաեւ Հռոմի Ֆրանսիսկոս Պապի մահէն ետք Իսրայէլի կողմէ պաշտօնական ցաւակցութիւններ չլիցնելու հարցին։ Իսրայէլը նաեւ քննադատութեան ենթարկուեցաւ յուդարկաւորութեան պաշտօնեայ չղրկելու համար։

Տիար Քարիվ ըսաւ. «Ես չեմ կրնար թաքցնել իմ դժգոհութիւնը եւ այն զգացողութիւնը, որ ես եւ շատեր կիսեցինք, թէ ինչպէս Իսրայէլի կառավարութիւնը վարուեցաւ Հռոմի Պապի մահուան օրերուն։ Կը ցաւիմ, որ կառավարութիւնը բարձրաստիճան պաշտօնեայ մը չղրկեց յուդարկաւորութեանը մասնակցելու»։

Սուրբ Երկրի քրիստոնէաներու ֆորումը նամակ հրապարակած է Իսրայէլի հարիւրաւոր քրիստոնէայ քաղաքացիներու անունով՝ մտահոգութիւն յայտնելով Արտաքին Գործոց նախարարութեան կողմէ Հռոմի Պապի մահէն ետք պաշտօնական ցաւակցութիւն չյայտնելու որոշման վերաբերեալ։ Հեղինակները որոշումը որակած են «անյարգալից վերաբերմունք Իսրայէլի եւ ամբողջ աշխարհի քրիստոնէաներու նկատմամբ»։

Honorable Members of the Knesset, Your Excellencies, Your Eminences, distinguished guests, dear friends,

First and foremost, I wish to express our deepest thanks to those who extended this invitation and have made it possible for me to speak before you today. It is no small thing—no small thing at all—for a Christian cleric, and an Armenian one at that, to stand in the legislative heart of the State of Israel and to be heard. We thank you. I thank you. And I thank those who value dialogue, transparency, and justice.

Giving the Armenian Community a voice in the Knesset is not only vital for us—but is a powerful testament to the world. It shows that the State of Israel, as a democratic institution, rejects discrimination. It shows that Israel does not ignore the cries of its Christian minorities. It shows that Israel believes its Christian citizens and residents deserve to be heard—deserve to be heard even in the highest halls of governance. This moment affirms the belief that our voices matter and that the Armenian Christian presence in the Holy Land is not invisible.

The Armenian people are the first Christian nation. Since the first century, our pilgrims have journeyed to the Holy Land. And since the 4th century, our organized presence as the Armenian Patriarchate has stood in Jerusalem—a continuous Christian presence, the oldest such uninterrupted Christian presence in this land. We are not newcomers. We are not strangers. We are not passersby. We are part of the spiritual DNA of this land.

We have never sought political dominion. Never. Our mission has been and remains solely a spiritual one. The Armenian Patriarchate has always worked to build brotherhood, not conflict; to serve the sacred, not to interfere in political affairs. When our people, survivors of the Armenian Genocide, arrived in Jerusalem seeking refuge, they came not to fight but to pray. They did not come with political agendas but with broken hearts and peaceful hopes. And it is a grave tragedy that those same people, or their descendants, now face the threat of being uprooted once again—not by war, but by hatred, not by state decree, but by unchecked bigotry.

The Armenian Patriarchate and the Armenian people have colored the mosaic of Jerusalem with beauty and brilliance. We brought the first printing press to Jerusalem. We created the first illuminated manuscripts. We produced the first distinct ceramics, whose vibrant tiles still decorate the streets and walls of the Holy City. We have made Jerusalem more beautiful. More spiritual. More human.

And we continue, to this day, to protect that spirit of Jerusalem—not only for ourselves, but for all Christians who come here in pilgrimage. We dignify this city, and through our stewardship, we elevate its sacredness before the eyes of the world.

But despite this long legacy of peaceful presence and cultural contribution, we are today being spat on—literally and figuratively. Clergy are spat on. Our faithful are spat on. Our churches are spat on and defiled in unspeakable ways. And this is not a metaphor. It is a reality. A growing, daily reality. Radical religious minorities, with no regard for the sanctity of other faiths, have made it a mission to defile us and our sacred presence in this land.

For over two decades, I have personally attended countless interfaith dialogues, conferences, and meetings with local leaders and rabbis. I have sat at the table of conversation. I have listened. I have spoken. I have pleaded. But in these last 20 years, the hate has not diminished—it has grown. In spite of the public condemnations from courageous rabbis and Jewish leaders, these hateful displays have not lessened but have become more frequent, more severe, and more intolerable.

And so, I have come to a painful conclusion: no one—not religious authorities, not community leaders, not even public condemnation—has been able to stop this radical religious minority or dissuade them from their hateful acts.

And so, I say it clearly, without hesitation: the time for dialogue is not over, but the time

for legislation has come.

In every Christian-majority country, when Jews face hate crimes, when antisemitism shows its ugly face, the full weight of the law is brought down upon the perpetrators. And rightly so. We demand the same dignity. The same protection. The same commitment to justice and dignity.

We do not ask for favor. We ask for fairness.

We are asking the Israeli state—this body, this Knesset—to protect the dignity and honor of Christian minorities in the same way that other Christian-majority nations protect the dignity and honor of their Jewish minorities. That is justice. That is democracy. That is Israel at its best.

There is only one measure that can stop this vile, despicable, and illegal behavior. Only one: The State of Israel must pass a law that imposes fines, and where necessary, imprisonment for those who assault, spit on, or desecrate Christians or Christian Holy Places.

This is not merely a matter of religious protection. It is a matter of human dignity.

If the State of Israel is truly concerned for its Christian minorities—then let it prove it. Not just with words, but with action. Not just with statements, but with statutes. Not just with dialogue, but with laws.

We are not seeking confrontation. We are seeking protection.

We are not asking for special status. We are asking for basic safety.

We are not enemies of this land. We are its oldest Christian guardians.

And we will not stop speaking, acting, and demanding justice until the day comes when every Armenian cleric and faithful can walk the streets of Jerusalem without fear of humiliation. Without the fear of indignity. I believe that day is coming soon. And I believe that its arrival can only be ushered in by the respected members of this legislative body.

May this Parliament, and may this nation, choose justice. Choose dignity. Choose peace.

May God bless all of you. And may God bring us the peace we all deeply seek. Thank you.

ՅԻՇԱՏԱԿ ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՄԵՐՈՅ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՅԱՆ ՅԸՆԹԱՅՍ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ՀԱԻԱՏՈՅ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Զորեքշաբթի, 23 Ապրիլ, 2025-ին, Երեկոյեան ժամը 17:00-ին, տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 110-րդ տարելիցին նուիրուած ջահերով երթ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի: Երթին մասնակից էին թէ՛ օտարներ եւ թէ՛ հայեր, որոնք պաստառներով եւ դրօշակներով քալեցին դէպի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, ուր տեղի ունեցաւ կարճ աղօթք: Ապա երթը շարունակուեցաւ դէպի Հայոց Յեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ մոմավառութիւն:

Հինգշաբթի, 24 Ապրիլ, 2025-ին, Հայոց Յեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց նահատակաց յիշատակի օրը, առաւօտեան ժամը 7-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ, ապա

Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Սիրոն Աբեղայ Թաքուշեան:

Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի, հոգեւորականաց դասը եւ ժառանգաւոր սաները գլխաւորութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր Թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեցին դէպի Հայոց ցեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ Բարեխօսութեան կարգ, որմէ յետոյ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սուրբ Աթոռոյս անունով ծաղկեպսակ մը զետեղեց յուշարձանին, ապա յաջորդաբար Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան, Իսրայէլի եւ Երուսաղէմի մէջ գործող Հայ միութիւններու ներկայացուցիչները իրենց միութիւններու անունով ծաղկեպսակներ զետեղեցին յուշարձանին:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, նախագահութեամբ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի, եւ կազմակերպութեամբ Սաղիմահայ Միացեալ Յանձնախումբի ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս: Բացման խօսքը կատարեց Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան: Յուշահանդէսի ընթացքին ասմունքով եւ խօսքով հանդէս եկան Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան, Տօքթ. Անուշ Նազգաշեան, Տիկին Կարինէ Սամաան, ինչպէս նաեւ ժառանգաւորաց եւ Թարգմանչաց վարժարաններու սաներն իրենց խմբերգերով ու ասմունքներով:

Յուշ-երեկոն իր լրումին հասաւ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի փակման խօսքով եւ աղօթքով:

«ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՏ ԿԱՆԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ «ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՒԱՆԻ» ՎԱԽԵՐԱԳՐԵՐՈՒՄ, ԶԱԽԷՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԶԵԿՈՅՑԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԿԱՅԻՆ» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

Ուրբաթ, 25 Ապրիլ, 2025-ին, երեկոյեան ժամը 7-ին, ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի, Լուսինէ Սահակեանի եւ Անի Սարգսեանի աշխատասիրած՝ «Հայոց ցեղասպանութեան զոհ կանանց եւ երեխաների փրկութեան գործը «Տեղեկատու դիւանի» վաւերագրերում, Զաւէն Պատրիարքի զեկոյցը Ազգերի լիկային» գիրքի շնորհանդէսը:

Երեկոյի բացման խօսքը կատարեց գիրքի համահեղինակներէն Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան: Սրբազան Հայրը նախ անդրադարձաւ գիրքի հրատարակութեան գաղափարին, աշխատանքներու ընթացքին, ապա շնորհակալութիւն յայտնեց համահեղինակներ՝ Տիկին Լուսինէ Սահակեանին եւ Տիկին Անի Սարգսեանին, սրահին մէջ ներկայ, խմբագիր՝ Տիար Վահրամ Պետրոսեանին, Ֆրանսերէն վաւերագիրներու թարգմանչուհի՝ Տիկին Ասյա Ղարիպեանին եւ գիրքի հրատարակութեան մեկենաս, Սաղիմահայ բարերար՝ Տիար Յովսէփ Գէորգեանին: Ապա խօսք առաւ գիրքի խմբագիր, Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազօտութիւններու ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւններու թեկնածու, դոցենտ՝ Տիար Վահրամ Պետրոսեան: Իր խօսքին մէջ Տիար Պետրոսեան ըսաւ. «Շնորհանդէսը գիրքի մը

ծննդեան արարողությունն է: Շատ ուրախ եմ, որ այս գիրքի ծննդեան վկայականը կը տրուի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մէջ»:

Խօսք առաւ նաեւ գիրքի համադինականերէն, Համապուրկի համալսարանի Ասիա-Աֆրիկա ինստիտուտի գիտաշխատող, օսմանագէտ՝ Տիկին Անի Սարգսեան, ով չկարողանալով զսպել յուզմունքը՝ անդրադարձաւ Առաքել Զաքրեանի զեկոյցներուն, որոնք տեղ գտած են գիրքին մէջ: Առաքել Զաքրեան իւրաքանչիւր տեղեկագրին մէջ կը ներկայացնէ Կեսարիայէն բերուած Հայ որբերու՝ տղաքներու եւ աղջիկներու պատմութիւնները, անոնց կրած տառապանքները,- ըսաւ Տիկին Սարգսեան,- «Տեղեկութիւններ կը հաղորդէ թուրքական ընտանիքներու մէջ անոնց արգելափակման, թուրքական որբանոցի մէջ յայտնուելու, եւ Հայ աղջիկներուն թուրքերու հետ բռնի ամուսնացնելու վերաբերեալ: Կ'անդրադառնայ նաեւ թուրք կանանց, նշելով՝ որ անոնք համոզուած էին ռեւէ մէկուն, անգամ երեխայի մը կրօնափոխելու պարագային իրենք կը յայտնուին դրախտի մէջ»: Իր խօսքի վերջաւորութեան Տիկին Սարգսեան ըսաւ. «Այսօր Թուրքիոյ Հանրապետութեան մէջ Օսմանեան կայսրութեան պատմութեան վերաբերուած սկսուած է: Այսինքն՝ այն թուրք ջարդարարները, որոնք ձեւով մը լռութեան քողին տակ էին, այսօր կը հերոսացան: Եւ մենք պէտք է առաւել ամուր կենանք եւ պատրաստուինք»:

Խօսք առաւ նաեւ գիրքի միւս համահեղինակ, Երեւանի պետական համալսարանի հայագիտական հետազոտութիւններու ինստիտուտի հայ-օսմանական առնչութիւններու բաժնի ղեկավար, արեւելագիտութեան ֆակուլտետի՝ թիւրքագիտութեան ամպիոնի դոցենտ՝ Տիկին Լուսինէ Սահակեան: «Մեզի համար շատ յուզիչ է Հայոց ցեղասպանութեան 110-րդ տարելիցին առիթով Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի պատերէն ներս կրկին ներկայացնել այն բացառիկ պատմական արխիւէն հատուած մը, որն անցած է երկարատեւ դեգերումներու ճանապարհ եւ վերջապէս 1938 թուականին ի պահ տրուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին», - ըսաւ Տիկին Սահակեան: Իր խօսքի վերջաւորութեան մասնաւոր երախտագիտութեան խօսք ըսաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօրը իր հայրական վերաբերմունքի եւ օրհնութեան համար: Շնորհակալական խօսքեր ըսաւ գիրքի ստեղծման աշխատանքներուն որեւէ ձեւով իրենց աջակցութիւնը բերած եւ իրենց գործին հաւատացած բոլոր անձերուն անուն առ անուն:

Շնորհանգէսի վերջաւորութեան Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքրեան շնորհակալութիւն յայտնեց գիրքի հեղինակներուն, որոնց մասնագիտական աշխատանքի շնորհիւ այս գիրքը դրուեցաւ ուսումնասիրողներու եւ հետազոտողներու սեղանին: Իր խօսքին մէջ Սրբազանն ըսաւ. «Այսօր իրականութիւն դարձաւ տեսիլքը, յոյսը եւ մեծ փափաքը երջանկայիշատակ եւ վշտակիր Զաւէն Պատրիարքի: Նախախընամութեամբ էր որ այս արխիւը դեգերումներէ ետք ի վերջոյ պիտի հասնէր Երուսաղէմ», ապա վստահութիւն յայտնեց. «Վստահ եմ Զաւէն Պատրիարքի հոգին երկինքի մէջ սա պահուս կը ցնծայ, եւ մեզի կը մնայ միայն աղօթել եւ մաղթել, որ այս հսկայ գործը շարունակուի ունենայ: Ուժ, կարողութիւն եւ եռանդ ձեզի: Դուք աշխատանքը տարէք, Աստուած ինք կը հոգայ մնացեալը»: Իր խօսքի վերջաւորութեան Սրբազանը փափաք յայտնեց ըսելով. «Մեր փափաքն է, որ այս գիրքերը թարգմանուին անգլերէն, ինչո՞ւ չէ նաեւ թուրքերէն: Ժամանակն է, որ քաղաքականութիւնը փոխուի եւ այս ամէնը լոյս աշխարհ գայ, եւ մեր արդար դատը, պահանջատիրութիւնը աշխարհին եւ առաջին հերթին ոճրագործ պետութեանը կանչեն պատասխանատուութեան: Յուսանք այդ ալ օր մը կ'իրականանայ»:

Շնորհանդէսը փակուեցաւ աղօթքով:

2025 թուականին հրատարակուած, 284 էջերէ բաղկացած սոյն գիրքին մէջ ներկայացուած է 1918 թ. Մուղրոսի զինադադարէն ետք Կ. Պոլսոյ մէջ Զաւէն Արք. Տէր-Եղիայեանի նախաձեռնութեամբ իրականացուած որբահաւաքի աշխատանքները: Ուսումնասիրութեան համար հիմք ծառայած են Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի մէջ պահուող «Տեղեկատու դիւանի» եւ այլ վաւերագրեր ու աշխատութիւններ: Քննութեան ենթարկուած եւ առաջին անգամ ֆրանսերէնէ եւ անգլերէնէ ամբողջութեամբ հայերէն թարգմանուած է Հայոց ցեղասպանութեան զոհ կանանց եւ երեխաներու փրկութեան գործին վերաբերող «Տեղեկատու դիւանի» թղթածրարը, որու մէջ հաւաքուած են 1920-1921 թթ. Ազգերու լիկային յանձնուած՝ Ժնեւի կեդրոնական կոմիտէի՝ «Պատերազմի զոհ դարձած երեխաներու օգնութեան միջազգային միութեան» Հայկական բաժնի, Զաւէն Պատրիարքի զեկոյցները, Առաքել Զաքրեանի տեղեկագիրները եւ եւս մէկ տեղեկագիր-զեկոյց: Այս թղթածրարը գործ մըն է (դոսիէ)՝ օսմանեան իշխանութիւններու, ապա քէմալականներու կողմէ հայ կանանց, աղջիկներուն, երեխաներուն համակարգուած կոտորելու կամ թիրքացնելու վերաբերեալ: «Տեղեկատու դիւանի» այս թղթածրարը ստեղծուած է կարեւոր այս խնդիրը միջազգայնացնելու եւ Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչ-պատասխանատուներուն, մասնակից յանցագործներուն պատժելու եւ արդարութիւնը վերականգնելու ակնկալութեամբ: Սոյն գիրքը նախատեսուած է համապատասխան մասնագէտներու եւ ուսանողներու, նոր ցեղասպանութիւններու կանխարգելմանն ուղղուած հայ եւ միջազգային կառույցներու նախաձեռնութիւններու համար:

ՍՈՉԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

ՍՈՒՐԲ ՍՏԱՆԻՍԼԱՅԻ ԵՔԱՆԵԱՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ ՅԱՆՁՆԵՑ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ

Չորեքշաբթի, 23 Ապրիլ, 2025-ին, Սոչիի Հայ համայնքի անդամները առաջնորդութեամբ համայնքային Տիար Մարկոս Քէսեանի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպման ընթացքին Սոչիի Հայ համայնքի անդամները հայապահպանութեան, մասնաւորապէս Սոչիի Հայ համայնքին հետ ստեղծուած կապերու, իր հայրական օրհնութեան եւ հոգածութեան համար, ինչպէս նաեւ գնահատելով Նորին Ամենապատուութեան տարիներու վաստակը՝ անոր յանձնեցին Սուրբ Ստանիսլաւի շքանշանի կրկնօրինակը:

Սուրբ Ստանիսլաւի շքանշանը պատմական շքանշան մըն է՝ ստեղծուած 1765-ին Լեհաստանի արքայ Ստանիսլաւ II Աւգուստոսի կողմէ, որպէս Լեհաստանի թագաւորական շքանշան՝ պարգեւատրելու բարձր արժանիքներու համար: 1815-էն ետք, երբ Լեհաստան անցաւ Ռուսական կայսրութեան վերահսկողութեան ներքոյ, շքանշանն ընդգրկուեցաւ Ռուսական կայսրութեան շքանշաններու համակարգին մէջ: 1917-էն ետք Ռուսական յեղափոխութենէ յետոյ շքանշանը դադրեցաւ պաշտօնապէս օգտագործուելէ, սակայն շարունակեց գոյութիւն ունենալ, որպէս դասական շքանշան:

Սուրբ Ստանիսլավի շքանշանը կը շնորհուէր իշխաններուն, հոգեւորականներուն՝ պետութեանը բերած ծառայութեան համար, բարեգործական գործունէութեան համար եւ ռազմական ու քաղաքական խիզախութեան համար: Այսօր այն կ'օգտագործուի որպէս պատուոյ շքանշան:

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՊԱՏՐԻԱՐԷ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԾ Է ՀՈՒՄԻ ԼԵՒՈՆ XIV ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՊԸ

Ուրբաթ, 9 Մայիս, 2025-ին, Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորած է Հռոմի նորընտիր Պապ՝ Լեւոն XIV Սրբազան Քահանայապետը:

Նուրհան Պատրիարք իր նամակին մէջ մասնաւորապէս ըսած է. «Իմ եւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան անունով ի սրտէ կը շնորհաւորեմ Ձեզ՝ Հռոմի Կաթողիկ Եկեղեցւոյ Սրբազան Քահանայապետ ընտրուելու առիթով: Ձեր՝ Սուրբ Պետրոսի Գահին բարձրանալը մեծ ուրախութիւն է ո՛չ միայն կաթողիկ հաւատացեալներու, այլեւ բոլոր քրիստոնեաներուն համար:

Հայ Առաքելական Եկեղեցին, որ հիմնուած է առաքելական աւանդութեանց վրայ տարիներ շարունակ եղբայրական յարաբերութիւններու մէջ է Հռոմի Կաթողիկ Եկեղեցւոյ հետ: Կ'աղօթենք, որ Ձեր հովուապետութիւնը նշանաւորուի նորոգուած ոգիով եւ Աւետարանի հանրահռչակումով, որուն կարիքն ունի հաւատացեալ աշխարհը:

Վստահ եղէք, որ պիտի շարունակենք աղօթել Ձեր առողջութեան, իմաստութեան եւ արդիւնաւէտ ծառայութեան համար: Թող Սուրբ Հոգին առաջնորդէ Ձեր իւրաքանչիւր քայլը, եւ թող Ձեր առաջնորդութիւնը լոյսի աղբիւր ըլլայ Եկեղեցւոյ եւ բոլոր ազգերուն»:

Նամակի վերջաւորութեան Նուրհան Պատրիարք դէպի Երուսաղէմ՝ Հայոց Վանք, ուխտի հրաւիրած է Հռոմի նորընտիր Սրբազան Քահանայապետը, ուր Հայկական ժառանգութիւնը կը պահպանուի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ծառայութեամբ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՅԱԻ ՀՈՒՄԻ ԼԵՒՈՆ XIV ՊԱՊԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ

Կիրակի, 18 Մայիս, 2025-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Հռոմի Սուրբ Պետրոս հրապարակին վրայ տեղի ունեցաւ Հռոմի Լեւոն XIV Պապի գահակալութեան արարողութիւնը եւ Քահանայապետութեան անդրանիկ պատարագը, որուն մասնակցեցան կարտինալական դասի անդամները, եպիսկոպոսներ, քահանաներ ու շուրջ 250 հազար ուխտաւոր հաւատացեալներ, աշխարհի տարբեր երկիրներու ղեկավարներ ու պետական ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ այլ կրօններու ու քրիստոնեայ քոյր եկեղեցիները ներկայացնող պատուիրակութիւններ:

Հռոմի Սրբազան Քահանայապետ՝ Լեւոն XIV-ի գահակալութեան արարողութեանց եւ մատուցած անդրանիկ պատարագին, Հայ Առաքելական Եկեղեցւոյ կողմէ ներկայ

գտնուեցան Նուիրապետական չորս Աթոռներու ներկայացուցիչներ: Որպէս Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պատուիրակ՝ ներկայ գտնուեցաւ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան, ընկերակցութեամբ՝ Դիւանապետ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի:

Նորընտիր Սրբազան Քահանայապետը՝ գահակալութեան արարողութեան սկիզբը, նախ ողջունեց բոլոր ներկաները, ապա ականարկեց վերջին օրերուն ապրուած խոր ու յուզումնալից պահերուն, սկսեալ Ֆրանչիսկոս Պապի մահէն, որ «մեր սրտերը լեցուց տխրութեամբ» եւ որ մեզի զգալ տուաւ «որպէս առանց Հովիւի ոչխարներ» — ըսաւ Լեւոն XIV Պապը:

Սրբազան Քահանայապետն անդրադարձաւ նաեւ իր ընտրութեան. «Ես ընտրուեցայ առանց ոչ մէկ արժանիքի եւ վախով ու դողով կու գամ ձեզի՝ որպէս եղբայր մը, որ կ'ուզէ դառնալ ձեր հաւատքին ու ձեր ուրախութեան ծառան՝ քալելով ձեր հետ Աստուծոյ սիրոյ ուղիին վրայ, որ մեզ բոլորս կ'ուզէ միացած միակ ընտանիքի ներքոյ» — ըսաւ Լեւոն XIV, հաստատելով՝ «սէրն ու միութիւնը Յիսուսին կողմէ Պետրոսին յանձնուած առաքելութեան երկու չափանիշերն են»:

Գահակալութեան արարողութեան ընթացքին, Լեւոն XIV Սրբազան Քահանայապետն ստացաւ պապական իշխանութեան խորհրդանիշները՝ «Ջկնորսի մատանին» եւ Պապական թիկնոցը (*pallium*):

Գահակալութեան արարողութենէն ետք, բոլոր ներկայ եկեղեցականներուն Վատիկանի կողմէ ճաշ տրուեցաւ: Ապա, հոգեւոր պետերը եւ ներկայացուցիչները հանդիպում ունեցան Քրիստոնէական Միասնութեան Պապական Խորհուրդի նախագահ՝ Կարտինալ Կուրտ Քոխին հետ:

ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ ՀՈԳԵԻՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՀՈՈՄԻ ԼԵՒՈՆ XIV ՊԱՊԻ ԿՈՂՄԷ

Երկուշաբթի, 19 Մայիս, 2025-ի առաւօտուն, Հռոմի Սրբազան Քահանայապետ՝ Լեւոն XIV Պապը, ընդունեց նախորդ օր «Հռոմի Եպիսկոպոսի եւ Պետրոսի յետնորդի» իր առաքելութեան մեկնարկի հանդիսաւոր արարողութեան եւ անդրանիկ պատարագին մասնակցած հոգեւոր պետերը եւ եկեղեցիներու ներկայացուցիչները:

Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատուիրակութիւնը կը գլխաւորէր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեան, որու կազմի մէջ էին Վատիկանի մօտ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչներ՝ Գերաշնորհ Տ. Անուշաւան Արքեպիսկոպոս Դանիէլեան եւ Տ. Գեղամ Արքեպիսկոպոս Խաչերեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչներ՝ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան եւ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Սրբազան Քահանայապետը ներկաներուն յորդորեց գործակցիլ յանուն խաղաղութեան՝ գերադասելով այդ նպատակը գաղափարական եւ քաղաքական շահերէ:

Խրախուսելով էքիմենիք շարժումը՝ Նորին Սրբութիւնը կոչ ւրաւ շարունակել քրիստոնեաներու եւ հրեաներու միջեւ երկխօսութիւնը, իսկ մահմետականներու հետ յարաբերութիւնները կառուցել փոխադարձ յարգանքի եւ խղճի ազատութեան հիման վրայ:

Դիմելով հոգեւոր պետերուն եւ եկեղեցիներու ներկայացուցիչներուն՝ Սրբազան Քահանայապետը նախ անդրադարձաւ «համընդհանուր եղբայրութեան» գաղափարին՝ յիշելով իր նախորդներէն Յովհաննէս ԻԳ-ի (XXIII) նախաձեռնութիւնները, ինչպէս նաեւ Ֆրանչիսկոս Պապի խթանած միջեկեղեցական ճանապարհն ու միջկրօնական երկխօսութիւնը, որոնք սերմանուած են անձնական յարաբերութիւններու եւ մարդկային հանդիպումներու միջոցով:

Իր խօսքին մէջ Նորին Սրբութիւնն անդրադարձաւ նաեւ Նիկիոյ Տիեզերական ժողովի 1700-ամեակին՝ բնորոշելով այն որպէս «հիմնարար հանգրուան բոլոր եկեղեցիներու եւ եկեղեցական համայնքներու կողմէ ընդունուած Հաւատոյ հանգանակի ձեւաւորման ճանապարհին»:

«Դէպի հաւատքի միասնութեան ձգտումը միշտ եղած է մեր հաստատուն մտահոգութիւնը, որու վկայութիւնն է նաեւ մեր եպիսկոպոսական առաքելութեան համար ընտրուած նշանաբանը՝ *In Illo uno unum* («Անոր մէջ որ Մէկ է՝ մենք մէկ ենք»), այսինքն՝ ինչպէս կը յիշեցնէ Սուրբ Օգոստինոս, «մենք, թէեւ շատ ենք, բայց Անոր՝ Քրիստոսի մէջ՝ մէկ ենք», ընդգծած է նորընտիր Լեւոն XIV Պապը:

Ապա, անդրադառնալով քրիստոնեաներու միասնութեան՝ շեշտած է. «Քրիստոնեաներու միասնութիւնը տեղի կ'ունենայ միայն այն ժամանակ, երբ մենք միասնական ենք Տէր Յիսուս Քրիստոսի մէջ, որովհետեւ որքան հաւատարիմ ու հնազանդ ենք Անոր, այնքան միաւորուած ենք իրարու հետ: Այդ պատճառով բոլոր քրիստոնեաները կանչուած են միասին աղօթելու եւ աշխատելու այս նպատակին իրականացման համար, որ կայ եւ կը մնայ Սուրբ Հոգիի պտուղը»:

Պապական ընդունելութենէ ետք Հայ Առաքելական եկեղեցւոյ պատուիրակութիւնը այցելած է Վատիկանի այգիներու մէջ գտնուող Սուրբ Գրիգոր Նարեկացիի եւ Սուրբ Պետրոսի տաճարի բակին մէջ բարձրացող Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի արձաններուն:

ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ԼՈՆՏՈՆ՝ ՄԻԱՅԱԾ ՀԱՒԱՏՔՈՎ. ՆԻԿԻՈՅ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԻ 1700-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԷՔԻՍԵՆԻԿ ԱՂՕԹՔ

Երեքշաբթի, 20 Մայիս, 2025-ին, Նիկիոյ Տիեզերական ժողովէն (325 թ.) ճիշդ 1700 տարի ետք Երուսաղէմը եւ Լոնտոնը համախմբուեցան էքիմենիկ աղօթքի, որ մէկտեղեց քրիստոնեայ տարբեր եկեղեցիներու ներկայացուցիչները:

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ սոյն աղօթքին ներկայ գտնուեցաւ Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեան:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆ

Ուրբաթ, 30 Մայիս, 2025-ին, երեկոյեան ժամը 18:00-ին, Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութիւնը տօնախմբեց իր հիմնադրութեան 100-ամեայ յօրելեանը՝ նախագահութեամբ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի եւ ներկայութեամբ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեանի, Սուրբ Երկրի մէջ Ասորւոց Եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակոբի, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներու եւ Սաղիմահայերու:

Երեկոյի բացման խօսքը կատարեց միութեան ատենապետ՝ Տիար Արամ Խաչատուրեան, ապա ցուցադրուեցաւ Հոգեշնորհ Տ. Ղեւոն Ծ. Վարդապետ Յովհաննիսեանի եւ Տօքթորա Անուշ Նազգաշեանի «...ԵՒ ԿՈՉՈՒԵՅԱՆՔ ՔԱՂԱՔԱՅԻ» ֆիլմը՝ նկարահանուած Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութեան 100-ամեայ յօրելեանին առիթով:

Ֆիլմի դիտումէն ետք խօսք առաւ Հոգեշնորհ Տ. Ղեւոնդ Ծ. Վարդապետ Յովհաննիսեան եւ համառօտ ներկայացուց ֆիլմի ստեղծման գաղափարի, պատրաստման ընթացքի մասին եւ ներկայացուց Տօքթորա Անուշ Նազգաշեանի խօսքերով եւ Տիար Գէորգ Բաղալեանի երաժշտութեամբ գրուած «Զօն»-ը Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութեան, որ կատարեցին միութեան անդամները:

Երեկոյի վերջաւորութեան Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութեան ատենապետը եւ փոխ-ատենապետը յուշանուէրներ յանձնեցին միութեան վաստակաւոր անդամներուն, ապա հրաւիրեցին Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանը՝ կատրելու Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութեան 100-ամեակին նուիրուած կարկանդակը, որմէ յետոյ Միութեան բակին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՑ ՀԱՆԴԷՍ

Զնայած Իսրայէլ-Իրան պատերազմի թէժ ընթացքին եւ յայտարարուած արտակարգ դրութեան, 16 Յունիս, 2025-ին տեղի ունենալիք Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Շրջանաւարտից հանդէսը յետաձգուած էր անորոշ ժամանակով:

Հինգշաբթի, 19 Յունիս, 2025-ին, երեկոյեան ժամը 19:00-ին, նախագահութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան Սրբազան Հօր, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Ամալերջի հանդէսը:

Միաբանութիւնը դիմաւորուեցաւ Ժառանգաւորաց վարժարանի օրհներգ «Սիրտի սիրտ» երգի հնչիւններու ներքոյ, ապա յոտնկայս երգուեցաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգը:

Հանդիսութեան բացման խօսքը կատարեց Ընծայարանի շրջանաւարտներէն՝ Բարեշնորհ Ռուբէն Սարկաւազ Յակոբեան: Երեկոյի ողջ ընթացքին Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի շրջանաւարտները եւ Ժառանգաւոր սաները հանդէս եկան իրենց հայերէն, անգլերէն, եբրայերէն եւ արաբերէն ուղերձներով, հեղինակային եւ ոչ հեղինակային ասմունքներով ու խմբերգերով, ինչպէս նաեւ դաշնակի եւ կիթառի գեղեցիկ կատարումներով:

Հանդիսությունների վերջափակման վարժարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Գեորգ Վարդապետ Հայրապետեան ներկայացուց Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի 2024-2025 ուս. տարուայ տեղեկագիրը: Շնորհակալական խօսքեր ըսաւ Ժառանգաւորաց վարժարանին եւ Ընծայարանին օժանդակող անձերուն եւ ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որու ընթացքին Ժառանգաւոր սաները գեղեցիկ սովորոյթի համաձայն ծաղիկներ յանձնեցին ուսուցչուհիներուն եւ մայրիկներուն: Իր խօսքի վերջափակման տեսուչ Հայր Սուրբը շնորհաւորեց եւ բարի երթ մաղթեց շրջանաւարտներուն, ապա հրաւիրեց Գերաշնորհ Տ. Թէոդորոս Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Շրջանաւարտներու վկայականները ինչպէս նաեւ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի առաջադէմ ուսանողներու մրցանակները:

Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն ետք Թէոդորոս Սրբազան շնորհաւորեց շրջանաւարտները եւ իր պատգամը տուաւ անոնց, ապա երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս օրհներգով, «Պահպանիչ»-ով եւ «Հայր մեր»-ով, որմէ յետոյ ներկաները պատուեցան հիւրասիրութեամբ:

Ընծայարանի շրջանաւարտներն էին. Բարեշնորհ Ռուբէն Սարկաւազ Յակոբեան, Շաւարշ Սարկաւազ Կարապետեան, Նուէր Սարկաւազ Գեղամեան, Էդգար Սարկաւազ Բաղդասարեան, Յովհաննէս Սարկաւազ Խումարեան եւ Խաչիկ Սարկաւազ Սարգսեան, իսկ Ժառանգաւորաց վարժարանի շրջանաւարտներն էին՝ Արա Յակոբեան, Հայկ Թեոսեան, Մարտին Բաբոյեան, Նարեկ Մկրտչեան եւ Սամուէլ Սուքիասեան:

ՈՒՐԱՐԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 21 Յունիս, 2025-ին, յետ Կիրակնամտից ժամերգութեան, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Ուրար կրելու իրաւունք շնորհեց Ա. Ընծայարանի ուսանողներ՝ Առնօ Մխիթարեանի եւ Զօրի Կարապետեանի:

Տուչութենէ ետք, ուրարով նորազարդ Տիրացուները մեկնեցան Սուրբ Յարութեան Տաճար՝ մասնակցելու Տնօրինական Սուրբ Տեղեաց թափօրին:

Թող Աստուած անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի Իր այգիին նուիրուին նոր եւ եռանդուն մշակներ:

ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐՈՒ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ԵՒ ՎԵՀԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔ

Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան 28 Յունիս, 2025-ին խստօրէն դատապարտեց Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները, ինչպէս նաեւ «Հայոց Սրբութիւն Սրբոցի հանդէպ վերջին օրերու ամօթալի եւ անպատուաբեր դրսեւորումներն ու գործողութիւնները»:

Պատրիարք Սրբազան Հայրն իր յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսած է.

«Խոր ցաւով եւ մտահոգութեամբ տեղեկացանք Հայաստանի Հանրապետութեան Ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակիցներու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ապա Վեհարանի տարածք խուժելու եւ հոն անդէպ իրավիճակ առաջացնելու մասին: Զէինք կարծէր, թէ հարցը ի վերջոյ հող կը հասնի, սակայն իրականութիւնը կարծէք պայթեցաւ յանկարծ, ռումբի մը չափ ուժգին եւ ցնցիչ սաստկութեամբ:

Կացութիւնը անդառնալի վիճակի մը հասած է, սակայն կոչ կ'ընենք անյապաղ երկուստեք նահանջել, գէթ կանգ առնել այն կէտին՝ ուր մեզ հասցուցած են վերջին դէպքերը: Եւ կանգ առնել՝ հանդարտութեամբ եւ խաղաղութեամբ, առանց նոր լարւածութիւն ստեղծելու, սթափ եւ զուսպ հոգիով, այլապէս այս ճանապարհը, եթէ շարունակուի, մեզի անդունդ պիտի տանի: Ուստի պէտք է խնայել թէ՛ Ազգը, եւ թէ՛ Եկեղեցին՝ խուսափելու համար նոր եւ աւելի ծանր աղէտներէ, Եկեղեցւոյ եւ մեր Ժողովուրդի մէջ նոր բաժանումներ եւ պառակտումներ ստեղծելու վտանգէն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը աղօթարան ու սրբարան է, «կերպարանք Աստուծոյ անքանակ էութեան», ինչպէս պիտի ըսէր Նարեկացի: Ան դարերով Հայուն պետականութիւնը եղած է, առանց պետական իրաւունքի, առանց զօրքի եւ ոստիկանի, բարոյապէս թագաւորելով մարմնապէս հալածուած եւ ընկճուած հոգիներու վրայ, իր ազդեցութեան շրջանակին մէջ պահելով բախտէն այրիացած սերունդները Հայուն: Ան կրօնական նուիրապետութեան մը կեդրոնը չէ միայն. այլ Հայուն հոգեւոր հայրենիքը:

Հետեւաբար, յանուն Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեան խստագոյնս կը դատապարտենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Հայոց Սրբութիւն Սրբոցի հանդէպ վերջին օրերու ամօթալի եւ անպատուաբեր դրսեւորումներն ու գործողութիւնները: Լիալոյս ենք, որ Մայր Աթոռը կը շարունակէ իր գործունէութիւնը համաձայն վանական եւ եկեղեցական օրէնքներու՝ յարգելով ՀՀ օրէնքները, իսկ ՀՀ իշխանութիւնն ալ կը վերահաստատէ փոխադարձ յարգանքը՝ հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ անոր գահակալի:

Մեր զօրակցութիւնը կը յայտնենք Ամենայն Հայոց Հայրապետին՝ հայցելով Բարձրեալի օգնականութիւնը եւ մաղթելով Հայոց Հօր երկար օրեր» — ըսած է Նուրհան Պատրիարք իր յայտարարութեան մէջ:

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ-ՁԵՌ-ԱԳՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՅԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՄԷՋ

Արդէն երկրորդ անգամ Հայագիտական միջազգային քոնկրեսի ծիրէն ներս տեղի կ'ունենայ հոգեւոր-ձեռագրական կեդրոններու ներկայացուցիչներու եւ Հայաստանի Հանրապետութեան պետական մարմիններու ղեկավարներու հանդիպումը:

Ինչպէս նախորդ, այնպէս ալ այս տարի հանդիպման օրակարգին վրայ էր հոգեւոր-ձեռագրական կեդրոններու հետ գործնական կապերու խորացումը, պետական աջակցութեան ուղղութիւններու եւ ձեւաչափերու որոշումը:

Քննարկմանը մասնակցած են աշխարհի տարբեր անկիւնները գտնուող հայկական մատենադարաններու եւ թանգարաններու տեսուչներ, տնօրէններ, փոխտնօրէն-

ներ եւ գիտաշխատողներ:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը ներկայացուց Սուրբ Թէոդորոս Զեռագրատան եւ Հելէն եւ էտուարտ Մարտիկեան թանգարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան:

ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԹԱՅՊԷ ԳԻՒՂԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

Երկուշաբթի, 14 Յուլիս, 2025-ին, Սուրբ Երկրի քրիստոնեայ հոգեւոր պետերը այցելեցին Թայպէ գիւղ՝ իրենց զօրակցութիւնն ու աջակցութիւնը յայտնելու տեղի քրիստոնեայ բնակչութեան, որ վերջին շրջանին թիրախ դարձած է Հրեայ ծայրայեղականներու յարձակումներուն:

Վերջին օրերուն Հրեայ ծայրայեղականները կրկնուող յարձակումներ կը գործեն Թայպէի խաղաղ բնակիչներու դէմ՝ այրելով անոնց այգիներն ու գիւղատնտեսական հողերը: Այս գործողութիւնները լուրջ վնասներ կը հասցնեն գիւղի բնակչութեան ապրուստին եւ վախի ու անապահովութեան մթնոլորտ կը ստեղծեն:

Այցի ընթացքին Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը ներկայացուց Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան՝ ընկերակցութեամբ Դիւանապետ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի:

ՖՐԱՆԶԻՍԿԵԱՆ ՈՒԽՏԻ ՆՈՐ ՄԵԾԱՒՈՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱԳԼԵՄ

Երկուշաբթի, 21 Յուլիս, 2025-ին, կէսօրէ ետք ժամը 15:00-ին, Ֆրանչիսկեան Ուխտի նոր մեծաւոր՝ Հայր Ֆրանչեսկօ Իէլպօ ժամանեց Սուրբ Երկիր եւ պաշտօնական մուտք ունեցաւ Երուսաղէմ:

Հայր Իէլպօ Հին քաղաքի՝ Նաֆայի դրան մօտ դիմաւորուեցաւ Սուրբ Երկրի հոգեւոր պետերէն եւ ներկայացուցիչներէն, որմէ ետք Ֆրանչիսկեան միաբանութեան եղբայրներէն կազմուած թափօրով առաջնորդուեցաւ դէպի իրենց Սուրբ Փրկչայ վանք:

Դիմաւորութեան արարողութեան Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը ներկայացուց Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան, ընկերակցութեամբ՝ Դիւանապետ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի եւ Աւագ Թարգման Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեանի:

ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՅՈՅՆ ԵՒ ԼԱՏԻՆ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ ԿԱԶԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՅԻ ՎԵՐԱԲԵՐԱԼ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

Երեքշաբթի, 22 Յուլիս, 2025-ի առաւօտեան, Երուսաղէմի մէջ կայացած համատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին Երուսաղէմի Յոյն Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Թէո-

Ֆիլիոս III եւ Երուսաղէմի Լատին Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Փիերպատիսթա Արքեպիսկոպոս Փիցապալա Կազա կատարած հովուական եւ մարդասիրական այցելութեան վերաբերեալ ականատեսի աչքերով ներկաներուն վկայեցին անոր ժողովուրդի կրած անասելի տառապանքներու, ռմբակոծութիւններու, պաշարումի եւ զրկանքներու մասին:

Համատեղ մամուլյ ասուլիսին Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան, ընկերակցութեամբ՝ Դիւանապետ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի:

Իր խօսքին մէջ Թէոֆիլոս III Պատրիարք Կազան նկարագրեց որպէս «պատերազմի վէրքերով խոցուած երկիր, ուր անմեղները կ'արին ահաբեկումներ անողոք յարձակման ծանրութեան տակ»: Ան հաստատեց, թէ Եկեղեցին Կազա մտած է որպէս Խաչեալ Տիրոջ ծառայ՝ փրկուածներու դէմքերուն հանդիպելով անասան արժանապատուութեան, որոնք կը կրեն Աստուծոյ պատկերը նոյնիսկ լայնածաւալ աւերածութիւններու մէջ:

Թէոֆիլոս III Պատրիարք խօսեցաւ աւերուած եկեղեցիներու, մասնաւորապէս Սուրբ Ընտանիքի եկեղեցւոյ եւ Սուրբ Պորփիրիոսի վանքի զգայացունց պատկերի մասին, ուր աղօթք բարձրացուցած են վիրաւորներու ճիշերու հետ համատեղ: Ան ընդգծեց, թէ Եկեղեցւոյ ներկայութիւնը խորհրդանշական չէ, այլ Աւետարանի թելադրութեան կենդանի դրսեւորում՝ կենալ նեղեալներու կողքին ոչ թէ խօսքով, այլ գործով:

Համաժողովի վերջաւորութեան զոյգ պատրիարքներն ընդծեցին, որ Կազայի մէջ շարունակուող աւերածութիւնները մարդասիրական եւ բարոյական աղէտ են, որ կարելի չէ անտեսել եւ հաստատեցին, թէ Եկեղեցին կը շարունակէ մնալ որպէս ճշմարտութեան կենդանի ձայն՝ կրելով յոյսի խաչը անարդարութեան առջեւ եւ պաշտպանելով մարդկային արժանապատուութիւնը կեանքի իրաւունքը պղծող քաղաքականութեան դէմ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ս. Աթոռոյս Տնօրէն Ժողովի 25 Յունիս, 2025 թուականի Բ (2) նիստի որոշումով եւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ կատարուած են նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Տիրան Վարդապետ Յակոբեան, ազատուելով Յոպպէի Սբ. Նիկողայոս եւ Ռամլէի Սբ. Գէորգայ վանքերու տեսչի պաշտօնէն՝ նշանակուած է որպէս Սբ. Յարութեան Տաճարի Առժամեայ Տեսուչ:

Արժանապատիւ Տ. Սուրէն Քահանայ Ղազարեան, ազատուելով Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի փոխ-տեսչի պաշտօնէն՝ նշանակուած է որպէս Յոպպէի Սբ. Նիկողայոս եւ Ռամլէի Սբ. Գէորգայ վանքերու տեսուչ:

Հոգեշնորհ Տ. Արբակ Աբեղայ Սարուխանեան, ազատուելով Սբ. Յարութեան Տաճարի Առժամեայ Տեսչի պաշտօնէն, իր ծառայութիւնը պիտի շարունակէ որպէս Սբ. Յարութեան Տաճարի փոխ-տեսուչ:

Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան նշանակուած է Ս. Աթոռոյս Աւագ Թարգման:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՃ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ